տաղնապէր նաեւ 'ի մեծի տառապանս զուխտաւորս Հայոց՝ 'ի պատճառս մաքսի։ Ոչ ինչ ազդէին 'ի լսելիս նորա աղաչանք և պաղատանք Թէոդորոս Պատրիարքի և Ղազար վարդապետի, և կալուածքն այնոքիկ մնացին երկար ժամանակ 'ի ձեռս այլազգեաց, և յետոյ հազիւ ուրեմն կարացին Թափել զնոսա 'ի ձեռաց նոցին։

Վերստին կազմեցաւ ժողով 'ի դատարանին Երուսաղէմի, ուր էին Հայք և Լատինք. խնդրեցին 'ի Հայոց զհին հրովարտակս՝ և նոքա մատուցին 12, որոց առաջինն էր Սէլիմայ առաջնոյ՝ տիրողին քաղաքին սրբոյ, յորոց զիջաւ փոքր ինչ սիրտ այլազգեաց։ Հրաման ետ դատաւորն չինել Ցունաց զտեղիս իւրեանց, զի 'ի հրովարտակի նոցա ոչ էր յիշեալ տեղիքն Ցունաց և Հայոց, և վասն այնոցիկ խոստացաւ գրել 'ի Դուռն և սպասել հրամանի Արքային։ Ցոյնք սկսան չինել զարտաքին մեծ դուռն, և իբրեւ կանգնեցին զվայտակերտս չինել զայն տեղիս կից նմին, հասին այլազգիք քաղաքին և արգելին զնոսա, զի տեղիքն այնոքիկ սեփհական էին Հայոց, և դադարեցաւ գործն աւուրս 8։ Ցոյնք ըստ հրամանի դատաւորաց վերստին սկսան չինել զվերին կողմն Աւագ խորանի իւրեանց, եւ պայման ետուն Հայոց աւուրս 30՝ բերել հրաման արքունուստ վասն տեղեաց իւրեանց. և նոքա գրեցին Թախանճանօք 'ի Կոստանդինուպոլիս առ գլխաւորս ազգին, և յորէ օր սպասէին գալստեան հրամանին, բայց երկարէր միջոցն, և միաբանք մնացին ոգեսպառ յանյաջողութենէ գործոյն, 'ի նախատանաց և 'ի դանից Ցունաց։ Գրեալ էր դարձեալ Կուսակալն Դամասկոսի խաղաղութեամբ չինել զտեղիսն ըստ հրամանի Արքային։ Իսկ Սիւլէյման Փաշա Աքքէի գրեաց սաստ առ դատաւորս Երուսաղէմի, թէ ո՞րպէսի հրամանաւ չինեցին Ցոյնք զդուռն տաճարին, եւ ո՞րպէս թոյլ ետուք, զի դուռն այն երից ազգաց է, եւ Միւթէվէլի տաճարին ես իսկ եմ, այլ նոքա լռելեայն գրեցին առ նա զոր ինչ և կամեցան։